

Բ-ի հրավերով գնաց Թիֆլիս (1781), վրացական տառեր պատրաստեց և ձուլեց: Վերակառուցեց վրաց թագավորին կողմն 1749-ին հիմնված տպարանը: Թիֆլիսի արքայական տպարանին մեջ իր տպագրած առաջին վրացերեն գիրքը կը կրե «Շեսխամպիրվելի ախլիսա ամիս ծիզնի-սաթվիս սուլեհնամվիսաթվիս» վերնագիրը: 1782-ին տպագրված սույն գիրքը կը բաղկանա 30 էջերն: Արապյան, 1782—1795 տարիներու ընթացքին նույն տպարանին մեջ 20 գիրք տպագրելեն հետո, անցավ էջմիաժին և օժանդակեց այնտեղ հիմնադրվող առաջին տպարանի զարգացումին: Արապյանը Կ. Պոլիս վերադառնալի վերջ նախ Հովհաննես և Պողոս անվան տակ տպարան մը հիմնեց (1795): Այս տպարանին մեջ ձուլեց «Նեսիհ» և «Թալիք» կոչված տառատեսակները, որոնք հետագային իր անունով «Արապօղլու» կոչվեցավ: Սուլթան Մահմուդ Բ-ը տպարան այցելելով կը հետևի կատարված աշխատանքներուն և արքունական արտոնագրով մը անոր «Պետական օրացույցներու» (Թարգլիմհանեի ամիրե) արհեստանոցի տնօրեն կը կարգե (1816): Առաջին անգամ ըլլալով Արապյանին կը տրվի առանձնաշնորհը իր գըլխադիրին վրա կրելու տպարանային շքանշան: Հատուկ արտոնագիրով մը Արապօղլու Պողոսին և անոր որդիներուն Ասատուրին և Գալուստին կը շնորհվի «Թալիք» տառերու կաղապարներուն ձուլումը: Այսպիսով, քանի մը ամսով մեջ կարելի կը դառնա այդ տառերով գիրքերու հրատարակութունը¹: 1820-ին Արապյանը իր անունով նոր տպարան մը

¹ Basbakanlik Arşivi (Վարչապետարանի արխիվ), Ճեվտեթ Մաարիֆի հրամանագիրները, 5933, 16 փետրվար, 1817: Ստորև կը ներկայացնենք Պողոս Արապյանի և իր որդիներուն տրված այն հատուկ արտոնագրի պատճենը հարազատ թարգմանությամբ, որով վստահված է թուրք տպագրութան հիմքը կազմով «Թալիք» տառերու կաղապարներուն ձուլումը: Սույն փաստաթուղթը զոր քաղած ենք թրքական պետական արխիվի մը, իր ամբողջական բովանդակությամբ կը վավերացնեն հայերու գործոն դերը թրքական մշակութիի զարգացման մեջ թանգլիմաթին ալ առաջ, 1817 թվականներուն:

«Ամենուն քաջ հայանի է, որ արքունական տպարանին մեջ որպես գեղեցիկ ու գեղագրութան համար օգտագործվող «նեսիհ» տիպի տառերու արական և իզական անվանվող պողպատյա, պղնձյա և տարբեր տեսակի աղյուսակներու համար գործածվող զանազան սարքերն ու կազմածնեքը 25 տարի առաջ վերստին հնարագործ ստեղծող Արապօղլու Պողոսն ու իր որդիները՝ Ասատուրն ու Գալուստը, ինչպիսի հսկա ջանքերու շնորհիվ վերանորոգած են այդ գիրերու կաղապարները: Բոլորը անխտիր անոնց մասին գովեստով կը խոսին, մասնավորաբար «քամուս»-ի տպագրութան համար օգտագործված կաղապարներու կրկին ձուլելուն, ինչպես նաև ճշտապահությամբ համար օգտագործված կաղապարներու կրկին ձուլելուն, ինչպես նաև ճշտապահությամբ և ամբողջական նվիրումով ծառայութան և իրենց ցուցաբերած հնարամտութան ու վարպետութան մասին: Հակառակ անոր, որ բացահայտ է, թե այս արքունական տպարանը ինչքան